

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻՆ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄՈՂ
ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ**

Ք. Երևան

30 հունիսի 2022թ.

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱԳԻԿ ԶՀԱՆԳԻՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ՝
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝**

Բարձրագույն դատական
խորհրդի անդամներ՝

Բեքմեզյան Գրիգոր,
Խաչատրյան Դավիթ,
Մակյան Մեսրոպ,
Մխիթարյանի Անի,
Զիչոյան Սերգեյ

ուսումնասիրելով Բարձրագույն դատական խորհրդի նախագահ (լիազորությունները կասեցված) Ռուբեն Վարդազարյանի կողմից 20.06.2022թ. տրված մամուլի ասուլիսում հրապարակված ձայնագրության մեջ Բարձրագույն դատական խորհրդի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Զհանգիրյանի կողմից կատարված արտահայտությունները,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. 20.06.2022թ. տրված մամուլի ասուլիսում Ռ. Վարդազարյանը հրապարակել է ձայնագրություն, որում, ըստ լավող ձայների և հնարավոր նույնականացման մասնակցում են Ռ. Վարդազարյանը, Գ. Զհանգիրյանը և ԲԴԽ անդամ Ս. Միքայելյանը:

2. Հրապարակված ձայնագրությունը ամենայն հավանականությամբ մոնտաժված է, դրանում հատվածական մտքեր են շուրջ երկու ժամ տևած հանդիպումից, ինչը հաստատվել է նաև Ռ.Վարդազարյանի կողմից ասուլիսի ժամանակ:

3. Հնչեցված արտահայտությունների վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար 20.06.2022թ.-ին ԲԴԽ անդամ Գրիգոր Բեքմեզյանը գրություն է ուղարկել Ռ. Վարդազարյանին խնդրելով հայտնել՝ ե՞րբ է կատարվել ձայնագրությունը, որտե՞ղ և ի՞նչ պայմաններում, ինչպես նաև տեղեկացնել՝ ովքեր են ներկա գտնվել ձայնագրությանն առնչվող հանդիպմանը: Միաժամանակ խնդրել է տրամադրել ձայնագրության ամբողջական տարբերակը: Գրությունը հասցեատիրոջն է հասել 24.06.2022թ.:

4. 22.06.2022թ. <https://oragir.news/> լրատվական կայքի հետևյալ հարցին «Պարո՛ն Վարդազարյան, ձայնագրության ամբողջական տարբերակը ե՞րբ կհրապարակեք, եւ Ձեզնից որեւէ մեկը այն պահանջե՞լ է, որովհետեւ պարոն Բեքմեզյանը ասել էր, թե գրություն է ուղարկել՝ ձայնագրության ամբողջական տարբերակը ստանալու: ORAGIR.NEWS <https://oragir.news/hy/material/2022/06/22/46959>» պատասխանելիս Ռ. Վարդազարյանը նշել է, մեջբերում ենք. «Ո՛չ, նման նամակ չեմ ստացել, սակայն հրապարակային եմ պատասխանում պարոն Բեքմեզյանին. ձայնագրությունը կտրամադրեմ ԲԴԽ անդամներին, եթե վարույթը վերսկսվի, դոնփակ դատական նիստով 2,5 ժամանոց ձայնագրությունը կլսեն մեկ պայմանով, որ դա հրապարակման ենթակա չի լինելու, որովհետեւ ձայնագրության մնացյալ հատվածում այլ անձանց եւ երեւոյթների մասին հատվածներ կան: ORAGIR.NEWS <https://oragir.news/hy/material/2022/06/22/46959>»:

5. Ելնելով այն հանգամանքից, որ Ռ. Վարդազարյանը հրաժարվել է տրամադրել ձայնագրության ամբողջական տարբերակը՝ Հանձնաժողովը ստիպված որպես ելակետային տվյալներ ընդունել է մամուլի ասուլիսից հայտնի դարձած փաստերը: Մասնավորապես՝ ձայնագրությունը կատարվել է **2021թ. փետրվարի 20-ին**, մասնակցել են

Ռ. Վարդազարյանը, Գ. Զհանգիրյանը և Ս. Միքայելյանը, ձայնագրությունը կատարվել է հանրային սննդի կազմակերպման վայրում:

6. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 85-րդ հոդվածի համաձայն՝

1. Բարձրագույն դատական խորհրդի անդամին Բարձրագույն դատական խորհուրդը կարող է ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ սույն օրենսգրքով սահմանված դատավորի վարքագծի կանոնները խախտելու համար:

2. Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը քննում է Բարձրագույն դատական խորհրդի առնվազն երեք անդամի միջնորդության հիման վրա:

3. Բարձրագույն դատական խորհրդի անդամի կարգապահական վարույթի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 19-րդ գլխի կանոնները՝ սույն հոդվածի պահանջների հաշվառմամբ:

7. Օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները խախտելը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

8. Օրենքի 144-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել՝**

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ **դատավորի վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելու հիմքով՝ խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումը կատարելուց մեկ տարի հետո**, բացառությամբ սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտումների:

9. Հանձնաժողովը գտնում է, որ մոնտաժված ձայնագրության հիման վրա անհնար է սկսել դատավորի կամ Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցում:

10. Հանձնաժողովը արձանագրում է նաև, որ բաց է թողնված կարգապահական վարույթի հարուցման Օրենքով նախատեսված մեկ տարվա ժամկետը, քանի որ Ռ. Վարդազարյանը **2021թ. փետրվարի 20-ին** կատարված ձայնագրությունը հրապարակել է միայն **2022թ. հունիսի 20-ին**՝ ենթադրյալ խախտումը կատարելուց մեկ տարի 4 ամիս անց:

11. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 144-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 146-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետով՝ Հանձնախումբը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բարձրագույն դատական խորհրդի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Զհանգիրյանի նկատմամբ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթի հարուցումը մերժել:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

_____ **Գ. ԲԵՔՄԵՂՅԱՆ**

_____ **Դ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ**

_____ **Մ. ՄԱԿՅԱՆ**

_____ **Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ**

_____ **Ս. ՉԻՉՈՅԱՆ**